# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## Գրասենյակային կահույք
## ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/13-14/16 ծածկագրով գնման ընթացակարգի

| Չ/հ | Անվանումը | Քանակը | Տեխնիկական բնութագրերը |
|---|---|---|---|
| 1 | Գրասեղան | 55 հատ | Սեղան լամինատապատ, մուգ գույնի, կողմերում՝ դարակներով՝ հոլովակների վրա, ձախից՝ հարկաբաժիններ համակարգչի մասերը տեղադրելու համար, միջնամասում շարժական դարակ ստեղնաշարի համար, չափերը՝ առնվազն (ԵxԼxԲ) 160x80x75 սմ: |
| 2 | Աթոռ /փայտյա/ | 75 հատ | Աթոռ փայտե, պաստառված, նստոցի բարձրությունը՝ (420-480) մմ, խորությունը՝ (360-450) մմ, նստոցի լայնքը լայն մասում՝ 360 մմ-ից ոչ պակաս, թիկնակի կորության շառավիղը՝ 450 մմ-ից ոչ պակաս (320 մմ-ից ավելի բարձրության թիկնակի դեպքում) և 250 մմ (մինչև 320 մմ թիկնակի բարձրության դեպքում): |
| 3 | Աթոռ /մետաղյա/ | 40 հատ | Աթոռ գրասենյակային, մետաղական, նստատեղը և հենակը փափուկ, գույնը՝ սև: |
| 4 | Բազկաթոռ /ղեկավարի/ | 20 հատ | Շարժական աշխատանքային բազկաթոռ: Կարկասը՝ մետաղից՝ պլաստմասե դետալների համադրմամբ, թիկնակի, նստատեղի և հենակների աշխատող մասերը՝ բնական կաշվի փոխանյութից, իսկ մնացած մասերը՝ դերմատինից: Բազկաթոռը պտտվող, անիվներով, նստատեղը՝ բարձրացող-իջնող, գույնը՝ սև: |
| 5 | Կահույքի լրակազմ | 11 հատ ղեկավարի աշխատասենյակի կահույքի լրակազմ | Կահույքի լրակազմը ներառում է գրասեղան իր դիմադիր և կողադիր սեղաններով, գրապահարան, զգեստապահարան և լրագրասեղան՝ բոլորը պատրաստված ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, միացման հանգույցները դրսի կողմից չերևացող, դիմային և կողային եզրերը գեղարվեստական պրոֆիլներով, միանման բռնակներով և նույն գույնի հումքից:<br>Գրասեղանը՝ մի կողմում 4 շարժական դարակներ՝ հոլովակների վրա, մյուս կողմում՝ համակարգչի համար նախատեսված դարակ և համակարգչի լարերի համար նախատեսված անցք, դարակները՝ փականներով, ալյումինե բռնակներով, երեսի հաստությունը՝ առնվազն 25մմ, չափերը՝ առնվազն (ԵxԼxԲ) 180x80x75 սմ, դիմադիր սեղանի չափերը՝ առնվազն (ԵxԼxԲ) 100x80x75 սմ: Կողադիր սեղանը՝ մի կողմից դարակներով, չափերը՝ առնվազն (ԵxԼxԲ) 45x100x60 սմ:<br>Գրապահարանը՝ ներքևում 2 դարակներ՝ առանձին երկփեղկ դռներով (փականներով), վերևի մասը 3 դարակներ՝ երկփեղկ, շրջանակով ապակյա դռներով, ալյումինե բռնակներով, դարակների բարձրությունը՝ առնվազն 40 սմ, չափերը՝ (ԼxԲxԽ) 80-ից 100 x 180-ից 200 x 45- ից 60սմ:<br>Զգեստապահարանը՝ երկփեղկ դռներով (փականով), ալյումինե բռնակներով, ներսում՝ կախիչներով, մետաղական ձողով, վերնամասում առանձնացված 20-ից 30 սմ դարակով, աջ դռան ներսի կողմից ամրացված հայելիով՝ 30x40 սմ: Չափսերը՝ (ԼxԲxԽ) 80-ից 100 x 180-ից 200 x 45- ից 60սմ, լրագրասեղանի չափսերը՝ առնվազն (ԵxԼxԲ) 120x70x45 սմ: |
| | | 25 հատ գրապահարան | Պատրաստված ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, միացման հանգույցները դրսի կողմից չերևացող, ներքևում 2 դարակներ՝ առանձին երկփեղկ դռներով (փականներով), վերևի մասը 3 դարակներ՝ երկփեղկ, լամինատե շրջանակով ապակյա դռներով, ալյումինե բռնակներով, դարակների բարձրությունը՝ առնվազն 40 սմ: Չափսերը՝ (ԼxԲxԽ) 80-ից 100 x 180-ից 200 x 45- ից 60սմ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | 25 հատ զգեստապահարան | Պատրաստված ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, միացման հանգույցները դրսի կողմից չերևացող, երկփեղկ դռներով (փականով), ալյումինե բռնակներով, ներսում՝ կախիչներով, մետաղական ձողով վերնամասում առանձնացված 20-ից 30 սմ դարակով, աջ դռան ներսի կողմից ամրացված հայելիով՝ 30x40 սմ: Չափսերը՝ (LxBxԽ) 80-ից 100 x 180-ից 200 x 45- ից 60սմ: |
| | | 1 հատ խորհրդակցություն ների կլոր սեղան | Խորհրդակցությունների կլոր սեղան՝ նախատեսված թվով 25 մարդու համար, մուգ գույնի, լաքապատ, ոտքերը փայտից, երեսը պատրաստված առնվազն 25մմ հաստությամբ ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, միացման հանգույցները դրսի կողմից չերևացող, եզրերը հաստեցված: |
| | | 1 հատ խորհրդակցություն ների սեղան | Խորհրդակցությունների սեղան՝ նախատեսված թվով 10 մարդու համար, մուգ գույնի, լաքապատ, ոտքերը փայտից, երեսը պատրաստված առնվազն 25մմ հաստությամբ ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, միացման հանգույցները դրսի կողմից չերևացող, եզրերը հաստեցված: |
| | | 3 հատ գրապահարան | Լամինատապատ, ներքևում 2 դարակներ՝ առանձին դռներով (փականներով), վերևի մասը 3 դարակներ՝ լամինատե շրջանակով ապակյա դռներով (Լ = 80-ից 90սմ), ալյումինե բռնակներով, դարակների բարձրությունը՝ առնվազն 40 սմ: Չափերը՝ (LxBxԽ) 330 x 187 x 45- ից 60 սմ: |
| | | 20 հատ կողադիր սեղան | Պատրաստված ԴՍՊ-ից կամ ՄԴՖ-ից, երեսապատումը՝ փայտե շպոն կամ բարձրորակ լամինատ, մի կողմում դարակներ, դիմային և կողային եզրերը գեղարվեստական պրոֆիլներով, չափսերը՝ առնվազն (ԵxLxB) 45x100x60 սմ: |

*Ապրանքը պետք է լինի չօգտագործված*

- Յուրաքանչյուր չափաբաժնի Ապրանքները պետք է լինեն միատեսակ և նույն գույնի:
- Մատակարարվող կահույքի գույնը պետք է նախապես համաձայնեցվի Գնորդի հետ:
- Մասնակիցը 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների Ապրանքների համար պետք է առաջարկի առնվազն 5 գույն, որոնցից որևէ գույն ընտրում է Գնորդը:
- Նախքան Ապրանքի ամբողջ ծավալով մատակարարումը Վաճառողը պետք է մեկական օրինակ համաձայնեցնի Գնորդի հետ:
- Վաճառողը պետք է Ապրանքը Գնորդին մատակարարի փաթեթավորված (չհավաքված):
- Կահույքի հետ Գնորդին պետք է տրամադրվի տվյալ կահույքի հավաքման գծագիրը (սխեման):
- Գնորդի պահանջի դեպքում Վաճառողը պարտավոր է կահույքը հավաքել օգտագործման վայրում:
- Ապրանքին պետք է տրվի առնվազն 365 օր երաշխիքային ժամկետ:
- Ապրանքի մատակարարման առավելագույն ժամկետ է սահմանվում Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 90 աշխատանքային օրը:
- Գնորդի կողմից Ապրանքի մատակարարման դիմաց վճարման պայմանները սահմանված են պայմանագրի նախագծի 4-րդ և 5-րդ կետերով:

**ՀՀ կառավարության աշխատակազմ**